եւ յաւելում տալ զդրուատ նորին նուիրակ տէր Ստեփան աւաք քահանային, սա թէպէտ փոքրագոյն է անձամբ առ (մեկ բառ անընթեռնելի—Վ. Գ.) մարդկան, սակայն է զուտ և անխառնակ ոսկի, դրեթէ լի ամենայն առաքինութեամբ, հոգևոր և մարմնաւոր, զի ոչինչ կերպիւ նուազ առ ի լրումն տանիլ զինչ և իցէ գործ։ Ըստ այնմ. «անասին գեօր զգին ալ, զրաղին գեօրբէզին ալ»[30]։ Արդ, որովհետև սա այսչափ խոհեմ է և ճարտար, ապայ որչափ առաւել և առաքող սորին իցէ՝ հանճարեղ, իմաստուն և նախանձայուզ վասն հայրենեաց։

Ուստի յայտնի երևի զնշան ինչ հաշտութեան Տեառն, որ և նախագուշակութիւն ազատութեան ազգիս, իսկ յայնժամ կատարեալ լինիցի բանս այս, որ զգունդս հայոց զօրաց՝ հանգոյն դպրատան և տպարանի հաստատութիւն առցէ։ Ապայ քաջալերեալ մեր զմեզ ասասցուք՝ ահա ժամ է և ժամանակ երգելոյ զերգն պատերազմական սափորովքն Գեդեհոնի։ Եւ երկրորդեցուք զբան հրեշտակին, թէ սուր Տեառն և Կատարիչեաց, որոյ բազկաւ զօրութեան ակն ունիմք զերծանիլ ի ծառայութենէ։ Պատճառեալ ի վատթար բարուց ուսումնատեաց իսկ և զինատեաց հաւուցն մերոց, որք ոչ եղէն ջանքոտ քեզ և Յովսէփայ մեծի՝ առ ի հաստատել զդպրոց և տպարանս, որպէս ի տէր հանկուցեալ կաթուղիկոսն, որ աւելի քան զութսուն հազար ռուփ տուեալ եղև նմա ի տէր փոխեցեալ Զակիկեանց Գրիգոր Միքայէլէն[31] նաև դրամօքն այնմիկ (բացի դրամոցն նուիրակութեան ընդհանուր Հայաստանեաց) զթըղթարան մի ոչ կարաց շինել և պահել ի հաստատութեան, որոյ պատճառն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ այն, զի անկայուն ակիզբն ունելով, այսինքն չունելով զտէրութիւն և սուր երկսայրի ի ձեռին ի սուրբ էջմիածին, նմանեցաւ վարդոյ շրջապատեալ փշօք բազմօք և թիւնալի տատասկօք, որոյ վասն և ոչ հաստատի հիմնադրութիւն իրակութեան խմիք անդ[32]։

Եւ թէպէտ զդպրատունն, ևս տպարանն յայդր օտար յերկրի և յանապատ վայրի է, սակայն ամենայնի ապահով և բացատ ի փորձանաց, իսկ և միամտապէս ի ներ յանդորր հպատակութեան մեծաշուք ողորմած և տիեզերակալ թագուհւոյն մեծի, յորմէ երկնչին և սարսին տէրութիւնք երկրի։ Որ և իշխանութիւն ձեր հանդէպն կալով հանապազ նորին ամենամեծ տէրութեանն բարեխօսութեամբ ներկայացուցանել յարժամ զվիշտս և զտառապակրութիւնս ազգիս՝ առ ի քաղցր պահելոյ ողորմած և գթած սիրտ նորին ի վերայ ամենեցուն, ուստի փոխարէն բարերարութեանդ վարձահատուց լիցի քեզ Տէր և քոյանոցդ իսկ, և երկայնամեայ արասցէ ի օգնութիւն, ի փառս և ի պատիւ մեր։

Սրբազան Յովսէփ եպիսկոպոսն և Արղութեանց տոհմի Երկայնաբազուկ առաջնորդն ի քէնէ ողջոյն գրէ, վասն որոյ գոհունակեմ ի սիրոյդ, որ և զկնի հինգ երկայն ամաց հազիւ թէ պատասխանեաց երեք երկայնաձիգ ի մի օրինակ թղթոցս մերոց։ Ի տեղի ազդ առնելոյ մեզ զստոյգութիւն համբաւուց և լրոց վասն թագուհւոյն մեծի ի խնդիր լինելն անարժանիս, միայն և եթ յոյժ ածէ զմեծութեանդ և քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչին խանդակաթ սիրով յիշատակելն զիս, և ոչինչ բան ի կողմանէ գթածառատ կայսէրուհւոյն, յորմէ սէրդ իսկ վկայ և ականջալուր էիր ի Մոսկով քաղաքոջ, ուր երիցս անգամ հրամանաւ նորին փրինս Գալիցինն[33] յորդոր և հրաւէր եղև ինձ, զի յօժարեցայց առնուլ պաշտօն երկրին Ռուսաց և այլն[34]։ Իսկ այժմս ոչ երբէք կարևոր լինի յինէն համոզել յանձն առնուլ առանց նորին հրամանի շարժիլ յայսմանէ և գալ յայդր։ Ուստի զշնորհն այն մեծ կախեալ կայ ի բարերարութենէ և իշխանութենէ քումմէ, զի միայն կարող ես, եթէ կամիցիս, յոյժ դիրաւ կատարել զխնդրուածս իմ և լինիլ առաջին և վերջին պատրոն, այսինքն պաշտպանիչ և պահպանիչ իմ յազգէ մինչև յազգ

Սրբազան յառաջնորդէն խնդրեալ եմ, ի քէնէ ևս խնդրեմ, որ իմոյս ամենայն թուղթք, որ առ նա կամ մեծութիւնդ թարգման տացէ ի ֆրանսասաց բարբառ, որ և ի յընթեռնուլն, եթէ շահաւէտ ոչ լինիցի, վնաս ևս ոչ ծագեսցի յայնմանէ, այլ կամք ձեր եղիցի։

Փոքրագոյն ծառայ և անծանոթ իշխանութեանդ Արշակ խոնհարաբար